




ԳՐԱԿԱՆ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. — ՊԱՏՄԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843-1897 ՀԱՏՈՐ ԵՆ ՄԱՐՏ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԷՊ

Ի ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ Մ ԽՈՐԵՆԱՅԻՈՑ

ՓՈՐՁ ԶՆԱՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԱԶԲԵՐԱՑ

(Ներածութիւն. տես ԳԽ. ԵԶ 540)



Մեր (Ռաւագ) Գիտութեան ճեմարանի ուսումնաթիւթից մէջ յերեւան եկաւ Վիկտոր Լանգլուայի « Ուսումնասիրութիւն Մովսէսի Խորենացոյ Հայոց Պատմութեան աղբրաց վրայ », (Etude sur les sources de l'Histoire d'Arménie de Moïse de Khoren): Այս ուսումնասիրութեան մէջ՝ հեղինակն մի առ մի կը թուէր Մովսէսի յիշած բոլոր աղբրները, ոչ թէ միայն իբրեւ ճշմարտապէս գոյութիւն ունեցող, այլ նոյն իսկ իբրեւ հայ պատմագրին ձեռքը գտնուած բաներ: Եւ են՝ Արիւկնոս, Բագմաւէլ, Եւրոտոս, Հիպոլիտ, Փլեգոն, Կամարոս, Եւազր, Արիստոն Պելլացի, գնոստիկեան Բարդեժանն, և այլն: Միանգամայն, Լանգլուան, յիշեալ պատմագիրներու ընծայուած՝ հայոց պատմութեան վերաբերող՝ երկասիրութեանց, գասական մատենագրաց մօտ անյշտապէ մնա-

մեր (Ռաւագ) Գիտութեան ճեմարանի ուսումնաթիւթից մէջ յերեւան եկաւ Վիկտոր Լանգլուայի « Ուսումնասիրութիւն Մովսէսի Խորենացոյ Հայոց Պատմութեան աղբրաց վրայ », (Etude sur les sources de l'Histoire d'Arménie de Moïse de Khoren): Այս ուսումնասիրութեան մէջ՝ հեղինակն մի առ մի կը թուէր Մովսէսի յիշած բոլոր աղբրները, ոչ թէ միայն իբրեւ ճշմարտապէս գոյութիւն ունեցող, այլ նոյն իսկ իբրեւ հայ պատմագրին ձեռքը գտնուած բաներ: Եւ են՝ Արիւկնոս, Բագմաւէլ, Եւրոտոս, Հիպոլիտ, Փլեգոն, Կամարոս, Եւազր, Արիստոն Պելլացի, գնոստիկեան Բարդեժանն, և այլն: Միանգամայն, Լանգլուան, յիշեալ պատմագիրներու ընծայուած՝ հայոց պատմութեան վերաբերող՝ երկասիրութեանց, գասական մատենագրաց մօտ անյշտապէ մնա-

լը՝ կը մեկնէր անոնց կորստեամբն, որով և ըստ իրեն խորենացին զիստութեան առջև առանձին իմ կարեւորութիւն կը ստանար, յրացընելով ասորի, քաղզէացի և յայն պատմագրութեան պակասը (հտ. Գ, յէջ 534-583):

Այս կերպով Հանգլուայի Մ. խորենացւոյն արեւրաց լրայի հետազոտութիւնը, նա և ութ ամ յետոյ, — երբ նորա « Ուսումնասիրութիւնք » (Etudes) ի լոյս կ'ընծա, յուէին երկնատոր, « Հայ պատմագրաց ժողովածոյին մէջ (յսմ 1867-1869) — Մըխիթարեանց նմանօրինակ աշխատութիւններէն անդին չէին առններ: Հօս մի բանի մէջ միայն զարտուղեցաւ իւր նախընթացաբար բաժէն. նա սկսաւ Ռբնանի կողմը հակել, ընդունելով որ Մար—Աբաս կրնար մեր թըւաւկանիս առաջին զարեւրում ապրած ըլլալ, թէպէտ և նա բնաւ քրիստոնեայ չէր՝ այլ հնթանոս, որովհետեւ՝ ըստ բանի զազդացի գիտնականին՝ « ամենեւին քրիստոնէական զաղափարաց նշան ինչ չկայ անոր պատմութեան մէջ », յորում յայտ է որ նա կը սխալէր. (Ժողովածոյ, Ա, յէջ 7):

Ընդհանրապէս Հանգլուայի իրաւասիրութիւնք, ինչպէս նա և Սէն—Մարտինի, կրցան յաւելն նպատակաւոր ըլլալ քնացընելու խորենացոյն նկատմամբ զարթող սկզբապիւններն ոգին, որով և անպատշաճ մնացին անոր Պատմութեան ապագայ քննադատական ուսումնասիրութեանց համար:

Այս բանն կարելի չէ ըսել նոյնպէս մեր վերագոյն յիշած Գուշդմիդի¹ երկասիրութեանն համար, որ՝ ընդհակառակն՝ խորենացւոյ քննադատական պատմութեան մէջ կարեւորագոյն մասն կը կազմէ: Նա առաջինն եղաւ, որ զբաղեցաւ անոր Պատմութեան աղբիւրաց քննադատական ընտրութեամբ, յորում և, հակառակ հայ պատմագիրն յայտարարութեան և հաւաստիչ որչա տեսութեանց, հերքեց հեղինակին իւր մի քանի աղբիւրացմէ անընդմիջաբար օգտուած լինելը. որք են, օրինակի համար, Աբիւզեհնոս, Աբիբկանոս,

Աբխատոն Պեղացի, Կեփալիոն, Փիրմիլիանոս, և այլն: Այլ, ըստ զերմանացի քննադատին, խորենացին զանոնք միայն Եսսերի Քրոնիկոնէ և Ելեղեցեական պատմութեանն գիտէր, իսկ զայով « Հայոց պատմութեան » հեղինակին երբ ապրած լինելուն. այդ հարցն պէս ի միտս Գուշդմիդի տարակոյս չի զարթուցաներ, այլ՝ ըստ օրինակի այլեց՝ նա իսկ զխորենացին Երէզ գարու կը վերադրէ:

Եթեմ ամ յետոյ, այսինքն է, 1883ին, Բրիտանական հանրագիտակի (Encyclopædia Britannica) մէջ լոյս տեսաւ Գուշդմիդի ուրիշ յօդուած մի Մ. խորենացւոյն լրայ. յորում նա ուղղակի կը ծանուցանէ, թէ « Հայոց Պատմութեան » հեղինակն՝ ոչ է համանուն Երէզ գարու ծանօթ թարգմանիչն, այլ բոլորովին ուրիշ անձնաւորութիւն մի՝ ծածկուած առաջնոյն զինակին տակ և մատենագրող եօթներորդ գարու կիսում, այսինքն է, ընդ մէջ 634 և 642 ամաց, ըստ իրեն, այս բանիս իբրեւ ապացոյց կը ծառայեն, նախ՝ ծայր ի ծայր ամբողջ գիրքը զրուսդ և բուն պատմութեան հետ սերտ կապակցեալ աշխարհագրական և ազգագրական ապաժամանակեայ անուանակոչութիւնն և տարածմութիւնքն (anachronisme). և երկրորդ՝ Պատմութեան հեղինակին նոյնութիւնն ծանօթ աշխարհագրական զրքին շարագրոյն հետ, յորում նմանապէս անպակաս են տարածմութիւնք:

Հօս պիտի չզրպդիմ Գուշդմիդի վերջին ենթադրութեան բացատրութեամբ, որ տակաւին խնդրոյ նիւթ է. որովհետեւ նոյն իսկ

2. « . . . Inzwischen bin ich in weiterer Verfolgung dieser Untersuchungen zu dem Ergebnisse gelangt, dass zu den mancherlei falschen Zeugnissen, die Moses von Khorni über seine Quellen ablegt, auch das über sich selbst gehört; nicht der gefeierte Uebersetzer des fünften Jahrhunderts ist Verfasser der Geschichte von Armenien, sondern ein unter seiner Maske schreibender Armenier aus den Jahren 634-642 . . . » — Յիշեալ յօդուածին զերմաներէն բնագիրն (Enogy. Brit. ed. IX, T. XVI, p. 861-863) հրատարակուած է նա և ի փոքր մատենագրութիւնս (Kleine Schriften) Գուշդմիդի, հտ. Գ. 1892, յէջ 332-338:

1. Ueber die Glaubwürdigkeit der armen. Geschichte, etc.

Սէն — Մարտին¹ այդ Աշխարհագրութիւնը ժողովարարութեանը կը համարէր. իսկ հանդուգնաբար Գ. Պ. Պատկանեան, նոյն գրութեան² ձեռնարկէ թարգմանութեամբ հանդերձ հրատարակութեան³ մէջ, խնդրոյն էութեան մէջ խորասուզուելով, կ'ապացուցանէր, թէ խորենացոյն ընծայուած այդ գրութիւնն՝ աւանդական հաւատարմութեամբ մի պատկանէր Էջմիածնի Պատմական ընկերութեանը։ Նմանապէս Էջմիածնի ընկերութեանը, Նմանապէս Էջմիածնի ընկերութեանը կը համարէր այդ Աշխարհագրութիւնը նաեւ հոյակապոր գերմանացի աշխարհագիրն էր պատկանէր⁴։ Այսպիսով կարելի է դիտել տալ քանի մի նման կէտեր « Պատմութեան » և « Աշխարհագրութեան » մէջ, բայց այդ կը նշանակէ մի շարագրութեան. միւսոյն վրայ ըրած ազդեցութիւնը։ Յամենայն դէպս, դեռ եւս այդ երկու գրութեանց հեղինակներու նշանակութիւնն ապացուցուած չէ, վասն որոյ եւս ալ կ'ամփոփուիմ պարզապէս ցուցնելու քերականացի քննադատին յառաջ բերած՝ մտադրութեան արժանի՝ տարածամութեան օրինակները։ Արդ, խորենացին (Ա. Ժ.) կ'ընծայէ հայ վիպական թագաւորաց միոյն՝ Արամայ՝ որ ժամանակակից էր աղորեստանայն Նիւռուսայ, Հայաստանի՝ Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ մասանց բաժանուելով։ ինչպէս այդ՝ իրօք Բուստինիանոսի ժամանակ միայն կատարուած է, յամեն 536⁵։ — Երկրորդ օրինակ. ըստ վիպութեան հայ պատմագիրն (Գ. Ժ.) Պարթից Շապուհ Բ (309—379) թագաւորն Բուսայ դէմ պատերազմելով կը հասնի մինչեւ ի Բաբելոնիա, ուր առաջին

անգամ Սասանեանք կըցան հասնիլ, և այն ալ միայն 608 տարւոյն¹։

Այս կերպով կը տեսնենք, որ յետ սրա միտ և համարձակ եզրակացութեանց Հայկոսի, առաջին Գուշապիցն եղաւ, որ լրջօրէն տարակառնեցաւ նկատմամբ ժամանակին առ որ կը վերաբերէին զխորենացին, և հիմնուելով նորաւոր կըստատմութեանց վրայ՝ հետեւցուց անոր Էջմիածնի Պատմական ընկերութեան հարցը²։

Այս երկու տարի յետոյ սկսան հրատարակուիլ վիեննայի (Միխիթարեան Հարց) գրական և գիտական հայերէն Ռուսորոյն Հանդիսին մէջ, Պարթուս արեւելեան կենդանի լեզուաց զարդին զաստիս Ս. Կարբիէր հայագիրն յօդուածներն՝ ի զաղիարէն լեզու, հանդերձ հայերէն թարգմանութեամբ. որք ապա ամփոփուելով ի մի մատեան, հրատարակուեցան այսպիսի խորագրաւ, Նորագոյն աղբիւրք Մովսիսի խորեանացոյ (Nouvelles sources de Moïse de Khoren) ի վիեննա, 1893, յէջ 1—56, Այդ յօդուածներ նուիրուած են խորենացոյն Պատմութեան Բ գրքին վերջին երկու-երեք զլիսց քննական ուսումնասիրութեան, բայց գլխաւորապէս նոյն գրք 83³է գլխին, ուր կը խօսուի կոստանդիանոսի հրաշալի դարձին վրայ ի քրիստոնէութիւն։ Այդ պատմութեան, հակառակ էստեղծայ հաւատքի պատմական սեղեկութեանց, հայ պատմագիրն մտաւ այնպիսի վիպական ձեւով մի աւանդուած է, որ կատարած կը յարուցանէ։

Արդ, որովհետեւ դաստիս Կարբիէր զլիսց հետազոտութեան վրայ հիմնուելով կարեւոր փաստեր ձեռք բերած է, անոր համար լաւ է որ զայդ քաղաքով մէջ բերեմ։

« . . . Ընդ նոյն աւուրս լինին հարսանիք և « Մարտինայ դստերն Դիոկղետիանոսի

1. Mémoires historiques et géographiques sur l'Arménie, հ. Բ, յէջ 301—406.

« Mémoires sur l'époque de la composition de la Géographie, attribuée à Moïse de Khoren », (հայ բնագիրն հանդերձ գաղղիական թարգմանութեամբ)։

2. Հայ աշխարհագրոգրիս Էջմիածնի դարձ, ընծայելով Մ. խորենացոյ. Ս. Պարթուր, 1887, էջը 12 + 84 (առաւ. թարգմ.) + 26 (հայ բնագիրն)։

3. Monatsberichte der Berliner Akademie, 1873, յէջ 599 և հետեւեալքն։

4. Տես նաեւ « Հայ աշխարհագրոգրիս երկրորդ դարձ », յէջ 34—35 և 44։

1. Kleine Schriften Գուշապիցի, հ. Գ, յէջ 333—336։

2. Տես նաեւ և, Vetter, Moses von Choren, ի « Kirchenlexicon Wetzer und Wolke », Heft. 88, յէջ 1953—1963, ուր՝ ստույգն ըսելով՝ յօդուածին հեղինակն պարզապէս Գուշապիցի սեռութիւնները կը կրկնէ։

« Ի Նիկոմիդայ, փեսայանալով նմա Կոս-
« տանդիանոսի կեսարի, որդոյ Կոստայ թա-
« փաւորին Հռովմայ, որ ոչ էր ի գասերէն
« Մաքսիմիանոսի, այլ Հեղենայ պոռնիկ ժը-
« նեալ... Էլ յետ ոչ բազում ամաց մեռեալ
« Կոստանդ, փոխանորդ նմա առաքէ Դիոկղէ-
« սիանոս զնորին որդի և զիւր որդիացեալն
« Կոստանդիանոս : — Սա յառաջ քան ըզ-
« թագաւորելն, մինչ զեռ կեսար էր, պար-
« տեալ ի մարտն, և տրտմութեամբ մեծաւ
« ննջեալ, երեւութացաւ նմա ի բուն խաչ
« աստեղեկայ յերկնից, պարունակեալ զրով,
« ասէ. Այստ յաղթեաւ. զոր արարեալ սիւ-
« զնոյն և յառջաբերեալ, յաղթեաց պա-
« տերաւմացն : Բայց յետոյ հրապուրեալ ի
« կեռլէն իւրմէ Մաքսիմիանայ՝ ի գասերէն
« Դիոկղէսիանոսի, յարոյց հալածանս եկե-
« ղեցոյ. և զբազումս վկայեալ, ինքն ե-
« ղեփանդական բորոտութեամբ ըստ բոլոր
« ընկալեալ մարմնոյն, ապականեցաւ, վասն
« յանդնութեանն : Զոր ոչ կարացին բու-
« ժելիլքն. յաղագս որոյ յղեաց առ (թա-
« փաւորն Հայոց) Տրդատ՝ առաքել նմա զիւթն
« ի Պարսից և ի Հնդկաց. սակալ և այնք
« ոչ հասին նմա օգուտ : Զոր և քուրմք ու
« մանք ի զիւաց խրատուէ հրամայեցին՝ բազ-
« մնութիւն տղայոց զենուլ յառազանս և ջերմ
« արեամբ լուանալ և ողջանալ. որոյ լուեալ
« զլալիւն մանկանցն հանդերձ մարցն կա-
« կանմամբք, զթացեալ մարդասիրեաց, զնո-
« ցայն լաւ վարկուցեալ քան զիւրն փրկու-
« թիւն : Յաղագս որոյ զփրկեալսն յԱս-
« տուծոյ ընդունի. յանրկախ անտեսութիւն,
« Առաքելոցն առեալ հրաման սրբիլ լուաց-
« մամբ կենսատու առազանին, ի ձեռն Սեղ-
« բեսարոսի եպիսկոպոսի Հռովմայ, որ ի
« նմանէ հալածանացն թագուցեալ էր ի
« Սորակոտին լեռանն : . . . »

Ետ լաւ հիմամբ դիտած է պր. Կարբիէր,
որ այդ զրոյին ինքն իրեն խայտառակութիւն
մ'է իր տգիտութեամբ՝ այն ամենայն մա-
սամբ՝ յորս կը հայի առ Մեծն Կոստանդիա-
նոս : Էլ յիրաւի, Կոստանդիանոս ներկա-
յացուած է հօս իբրեւ աղճկորդի մը, զոր
այժմ ամենայն պատմաբանք կը հերքեն :

Դարձեալ, նա կ'ամուսնանայ ի Նիկոմիդիա,
իբրեւ արգէն կեսար, Դիոկղէսիանոսի Մաք-
սիմիան պատեր հետ, իւր հօրն՝ Կոստանդ
Քլորոսի « Հռովմայ թագաւորի » կենդանու-
թեան ժամանակ, որ և այս անճիշդ է : Կոս-
տանդիանոս կայսր անուանեցաւ յետ մահու
հօրն (ի 25 յուլիսի, 306 ամին), որ ոչ
թէ ի Հռովմ կ'իշխէր, այլ ի Գաղղիա. նա
երբէք Դիոկղէսիանոսի զստեր Մաքսիմիանայ
հետ ամուսնացած չէ, այլ Մաքսիմիանոսի
զստեր փաւստայ հետ, և 307 տարւոյն,
այսինքն է, զրեթէ իւր հօր մահուանէ տարի
մի յետոյ, կատարուեցան անոր հարսանիք՝
ոչ ի Նիկոմիդիա, այլ Գաղղիոյ Ալլ Քա-
ղաքին մէջ. վերջապէս, օտոյց կերպով ծա-
նօթ է, որ թէ և Կոստանդիանոս՝ յետ տե-
սիլքը տեսնելու՝ չէր զաղրեր քրիստոնեա-
ները պաշտպանել, բայց ինքն միայն իր
կենաց վերջերը մկրտուեցաւ (ի 22 մայիսի,
337ին), և այն եւս ոչ թէ Հռովմայ Սեղ-
բեսարոս պապին ձեռօք, այլ Նիկոմիդիոյ Եւ-
սեբիոս՝ եպիսկոպոսին : — Դասախօսն Կար-
բիէր ուշադրութեամբ զննեց թորեմնացւոյ
պատմութեան այդ կասկածելի գլուխը, և
գտաւ անոր մէջ ակն յայտնի նշաններ փո-
խառութեան մի՝ վաղք Ս. Սեղբեստրոսի
(Vita S. Silvestri) ըստած անհարգատ
(apocryphe) գրութենէն, և լաւ եւս ըսել,
այդ « վարուց » լատին բնագրին՝ որ ԶԻԷ
գարու օկղան կը վերագրուի՝ յունական
թարգմանութենէ (կամ խմբագրութենէ) :
Աստի նա հետեւցուց, որ թորեմնացին՝ օգ-
տուելով յիշեալ անհարապատ գրութենէ՝ չէր
կարող հինգերորդ պարու մատենագիր համա-
րուի :

Համեմատութեան համար բաւական է մէջ
բերել վարուց այն հատուածը, որ կը հա-
մապատասխանէ թորեմնացւոյն տուած նկա-
րագրոյն Կոստանդիանոսի վրայ եկած բարո-
տութեանն.

« . . . Κωνσταντίνος τοῖνον Μαξιμian τὴν
Διοκλητιανου τοῦ βασιλέως θυγατέρα ἔχων γυ-
ναῖκα, καὶ πολλοὺς τῶν χριστιανῶν ἀνελών,

1. Եղորդոցն Աղբեք Մ. Թորեմնացոյ, յէջ
15-14 :

ἐλεφαντινῇ λέπτρᾳ καθ' ὅλου τοῦ σώματος
πληγείας ἐτραυματίσθη. Τούτῳ δπηγίκα οἱ μά-
γοι οἱ λεγόμενοι Ἀρίολοι, καὶ οἱ ἐπάοιδοι, καὶ
οἱ Μαρσικοὶ ἱατροί, οὐ μὴν ἄλλα καὶ οἱ ἐκ
Περσίδος ἀχθέντες ἔμπειροι τῆς ἱατρικῆς ἐ-
πιστήμης, οὐδὲν ᾔδυνθήσαν συμβαλέσθαι αὐ-
τῷ. ἀνεφάνησαν δὲ τινες ἱερεῖς τοῦ Καπε-
τωλλοῦ λέγοντες· Ὁφείλει γενέσθαι κόλυ(μ)-
βος, ἥγουν κολουμβήθρα ἐν τῷ Καπετωλίῳ,
καὶ πληρωθῆναι αὐτὴν ἀφθόρων παιδίων αἰ-
ματος, ἐν ᾧ ζέοντι ἐτι καὶ ὥσανε καπνίζοντι
λουσάμενον αὐτὸν δυνήθηται καθαρισθῆναι...
Ἀπῆντησαν αὐτῷ αἱ μητέρες... κωκυτοὺς καὶ
ἀλαλαγμοὺς ἀκρίεσαι... καὶ φιλάνθρωπον ἡ-
θος ἀναλαβών... Προκρίνον τῆς ἐμαυτοῦ
ὕγιαιας τὴν τῶν ἀφθόρων παιδίων σωτηρίαν.
Ταύτῃ τοίνυν τῇ νυκτὶ ὀπτασίαν ὄρᾷ, ἐν ᾗ ἐφά-
νησαν αὐτῷ οἱ ἄγιοι ἀπόστολοι λέγοντες· Ἡμεῖς
ἐσμεν... οἱ πεμφθέντες παρὰ τοῦ Θεοῦ... ἵνα
πέμψῃς πρὸς Σίλβεστρον τὸν ἐπίσκοπον, ὅς,
τὸν διωγμὸν τὸν σὸν δεδοικώς ἐν τῷ σπηλαίῳ
τῷ ὄντι ἐν τῷ Σοραπτινῷ ὄρει κρύπτεται.
(Ἰερραφ. Աղբերք Մ. Խ. յէջ 2-3):

Ինչիւն այս է, որ նոյն իսկ Խորենաց-
ւոյ Պատմութեան լատինաւէն թարգմանողը,
վիսսանեան Եղբարք, անդրադարձեր էին
837-րդ զիսոյն՝ Ս. Սեդրեատուրի վարուց ան-
հարապատ պատմութեան հետ ունեցած նմա-
նութիւնը, ընդունելով՝ որ այն ղեպքին մէջ
ոչ մի կերպով կարող չեն իրենք հայ պատ-
մագիրը արդարացընել, որ կ'օգտուէր այն-
պիսի խառնակ առասպելներէն, որպիսի էր՝
ըստ իրենց՝ յիշեալ զիսոյն բովանդակութիւնն:
Բաց աստի, նոքա մասնանիշ կ'ընէին՝ թէ
այդ զիսին նոր փաստ մ'ալ կու տայ տա-
րակուսելու Խորենացւոյ Պատմութեան հնու-
թեան վրայ: Բայց նոքա աստի աւելի ա-
ռաջ չգտցին:

Խորենացւոյն ըսածներուն՝ Սրբոյն Սեդ-
րեատուրի վարուց հետ ունեցած նմանու-
թիւնը՝ գրաւած էին նա և վենետիկ Միխ-
թարեանց 1836-37 ին միջոց հրատարակած
ճեմարանական Հայկազեան մեծ բառարանը
յորինոյ անձինք, որք՝ բաց աստի՝ առաջին
անգամ մատնանիշ կ'ընէին նա և այդ վա-
րուց՝ հայերէն թարգմանութեան մ'իսկ գո-
յութիւնը:

Գասախօսն Կարրիէր իւր երկրորդ յորուա-
ծին մէջ դեռ աւելի մանրամասն ոճով գրա-
ղեցաւ այդ խնդրով: Իմանալով պր. Նորայրէն
յիշեալ վարուց հայ թարգմանութեան գոյու-
թիւնը, փառնի գիտնականն մի և նոյն ժա-
մանակ (1892) որոշեց ղէպ ի վենետիկ ու-
ղեւորութիւն մի ընել, որ և Միխիթարեանց
ծիր մատենապարանին մէջ ձեռք բերաւ այդ
վարուց հայ թարգմանութիւնը պարունակող
գրչապիրները: Վարուց հայերէն թարգմանու-
թիւնն, բաղդատուելով խոր. Պատմ. 837-րդ
զիսոյն հետ, աւելի մերձաւոր երեւեցաւ ա-
սոր հետ կարգադրութեամբ, քան թէ նոյն
վարուց յունական խմբագրութիւնն. և որով-
հետեւ այդ վարքն գրչագրաց մէջ կապակցեալ
կը գտնուի Սոլրատայ Եկեղեցական պատ-
մութեան հայ թարգմանութեան հետ, իբրեւ
ասոր սիրելոյ կամ ներածութիւն մի, և ինչի-
նոյս թարգմանութիւնն՝ յորմէ եւս օգտուած
է Խորենացիին՝ կատարուած է ի վերջ Է-ր-
դարու, աստի ա՛հա հմուտ հայագետն աւելի
կարեւոր եզրակացութիւն մի հանեց. այս
ինքն՝ թէ Խորենացին չի կրնար ոչ Է-ր-դ և
ոչ Զ-ր-դ դարու գրիչ համարուիլ՝ եթէ զըս-
տին նորա մէջ յայտնի հեռքեր՝ Է-ր-դ դա-
րուն աղբրեացմէ եղած փոխառութեան: (Նո-
րաֆ. աղբ. Մ. Խ. յէջ 18-19):

Hinc autem de Agathangel et Chorenensis
antiquitate merito licet dubitare, tametsi vix
aliquid statuere possumus, cum illud nescia-
mus, quo primum tempore fabula hæc tur-
pissima in vulgus emanaverit. Vide Baronium
ad A. C. 324; Niceph. Hist. Eccles. VII, 33;
Zonar., p. 3, 4; Cedren, p. 223 n. (Mosis Cho-
renensis Historiæ Armeniacæ... Whistoni fi-
lii, Londini, 1736, p. 210).

1. Հայկազ. ձեմար. քառադաս, վենետիկ,
հա. Ա. 1836. Նյախադարձք, յէջ 19:

1. "... Caeterum totum fere hoc caput
erroribus et fabulis tam fæde coopertum est, ut
nostram plane admirationem moveat, quomo-
do is tam misere in his rebus labi potuerit,
qui Eusebium videtur legisse. Nos hic Cho-
renensis partes nullo modo tueri possumus.
Id pro nobis Baronius faciet, qui Acta Sil-
vestri defendit, quæ eandem fabulam narrant,
ac proinde ex eodem fonte videntur hausta.

Դիտողութեան արժանի է և այս, զի Սո-
կրատայ հայ թարգմանութեան բաականա-
շափ գրագրոց մէջ՝ կը հանդիպմբ երկու
յայտնապէս իրարմէ տարբեր խմբաբա-
ժեանց: Ասոնք մին, որ աւելի սակաւա-
գիտ¹ է, բառ առ բառ թարգմանութիւն է,
մինչդեռ միւսն, որ աւելի տարածուած է,
կը պարունակէ նոյն նիւթոյն ազատ թարգ-
մանութիւն մի, կամ թէ բսել, նոր խմբա-
գրութիւն մի յապտմամբք, փոփոխութեամբք
և յաւելումովք հայ թարգմանչին կողմանէ:
Այս յաւելումոց կարգէն է նա և Սրբոյն
Սեդրեարտոսի անհարազատ վարքն, որ դրուած
է ի սկիզբն Եկեղեցական պատմութեան²,
մինչդեռ նոյն վարքը կը գտնմբք գրուած,
բայց բոլորովին ուրիշ թարգմանութեամբ, նա
և ի վերջ առաջին խմբագրութեան³:

Երկրորդ խմբագրութիւնը, իր մէջ տես-
նուած համառոտութեանց պատճառաւ, գիտ-
նականք սկսան փոքր Սոկրատ կոչել, այսու
զանազանեցով յառաջնոյն՝ որ աւելի կատա-
րեալ և ընդարձակ է, զոր և Մեծ Սոկրատ

անուանեցին: Այդ երկու թարգմանութեանց
իրարմէ ունեցած ժամանակի առաջնութեան
հարցն՝ ներկայ խնդրոյս մէջ՝ մեզ համար
երկրորդական կարեւորութիւն ունի. մեզի կը
բաւէ զիտել՝ որ նոքա ի վերջ Էրոս դարու
կը վերագրին, և ինչպէս ես կը կարծեմ,
իրարու հետ ալ յայտնի յարնչութեան մէջ
կը գտնուին: Աւելի կարեւոր է ցուցնել
այն հանգամանքը՝ թէ խորենացին — որչափ
որ կարելի եղաւ ինձ դատել՝ համեմատելով
Հայոց պատմութիւնը փոքր Սոկրատայ⁴ և
ձեռքս ունեցած Մեծ Սոկրատայ⁵ մի քանի
հատուածոց հետ, — օգտուած է երկրորդ
խմբագրութեանէն, կամ թէ բսել փոքր Սոկրա-
տէն, անտարակոյս ասոր մէջ իմանալով նաև ի
սկիզբն դրուած Սրբոյն Սեդրեարտոսի վարքն:

Այս կարծեաց ի հաստատութիւն գտնեք
ստորեւ Մ. Խորենացոյն Կոստանյիւսնոսին
վրայ խօսող ՏՅԻՐ զուխը, ի համեմատու-
թիւն՝ Ս. Սեդրեարտոսի վարքէն քաղուած՝
նոյն բանի վրայ խօսող հատուածնհրու հետ,
բայտ Մեծի և բայտ փոքր Սոկրատայ:

Մ. ԽՈՐԵՆԱՅԻ

ՎԱՐԲ. Ս. ՍԵԴՐԵԱՐՏՈՍԻ

ՎԱՐԲ. Ս. ՍԵԴՐԵԱՐՏՈՍԻ

Պար. Հայոց, քէրթ, քէրթ 83

Հայ Խորենացի Գ. Ս. Սեդրեարտայ*

Հայ Խորենացի Գ. Ս. Սեդրեարտայ*

(ԸՎԻ ԿՐԵ. ԵՄ. ՄԻՆԵՐ. Թ. 1670)

(ԸՎԻ ԿՐԵ. ԵՄ. ՄԻՆԵՐ. Թ. 1682)

... Բայց յետոյ հրապա-
րեալ է Բաբել Երգ Մարտի.
միտք (տարբ. երկր գրէ).
ՄԻՆԵՐԻ, Ա. գրէ. ՄԻՆԵ-
ՐԻՎԵՐԻ Երգերի Դիւլիշի-
...

... Բայց հրապարակեալ է Բաբել Եր-
գ (տարբ. վեմնով. գրէ. Երգ).
ՄԻՆԵՐԻ(Յ) է ԳԻՆԵՐԻ Դիւլիշի-
նոյն և արտ հաւանա Դիւլիշի-
կոստանդիանոս ի ձեռն
կոչել իւրոյ

Իսկ կին նորա վրդովեաց զնա հակառակ
քրիստոնէից. և ի ժամանակին յայնմ ար-
տագրանց զպատմութիւն. համայնաց բոլոր
քրիստոնէից գտնէ Կարաւորագէտ կոչոյն.
... Իսկ կոստանդիանոս թագաւոր զՄար-

1. Յարգ այս խմբագրութեանէն երկուս միայն
գրչագիր ծանօթ է, յորոց մին կը գտնուի ի
Ս. Ելմիսնի, իսկ միւսն յԵրուսաղէմ՝ Հայոց
Ս. Յովակիմայ վարքին մէջ:

2. Տես Հայկական հին քարտ. նախնեաց.
Հ. Գարեգին Զարեանհայեանի, Վեներիկ, 1889,
յէջ 696: — Կարբէրէ, Կրպոյ. աղբ. Մ. Խ.,
յէջ 148: — Հմմ. նա և Հ. Մեհրապալ յօ-
ղանայն յԱրարատ, 1893, յանուար, յէջն 65-
73: — յԱր. Նորայրի ի Հանդէս Ամսորեաց.
1893, Սեպտ., յէջն 273-278:

3. Այս վերջին ծանօթութիւններս կը պարտիմ
Հ. Մեհրապալ վարդապետին կանխաւ ինձ տուած
տեղեկութեանց, որ և հասուց ինձ Ելմիսնի
մատուցարարանի մէջ գտնուած Մ. Սոկրատայ
միակ զրչագրին (1682) երկու ինքն լուսանկա-
րը. այսինքն են, — վերջ եկեղ. պատմութեան

և սկիզբն վարդաց Ս. Սեդրեարտոսի: Ի՞նչու ցա-
ւալի է, որ Հ. Մեհրապալ սկսած՝ Սոկրատայ.
պատմութեան երկու հայ թարգմանութեանց՝
հրատարակութիւնն այնպէս զանգաղ կը յա-
ռաւէ:

4. Այս առիթն յարմար կը դատիմ յայտ-
նելու իմ շնորհակալութիւնս առ Կ. Ա. Ե-
դեանց, որ ամենայն ազնուութեամբ իմ արա-
մաղործութեան յանձնեց իւր ունեցած փ. Սո-
կրատայ ընտիր զրչագրերը:

5. Ասանցմէ երկուքն, այսինքն են, Կոստանդ-
նուպոլսոյ շինարարեան և վրաց դարձին գրու-
ները, որքանակուած յիշեալ Ելմիսնի զրչագրէն,
իմ ձեռքս հասուց չը. Եղիշէ Մատաթեանն,
առ որ կը յայտնեմ խորին շնորհակալութիւնս:

* Վերջով գրեալ Ելմիսնի գրչագրիմ երկու
նախուածմիր ճրատարակուած էիմ «Արարատի»

Մ. ԻՌԵՆԵՅԻՏ

ՎԱՐՔ Ս. ՍԵՂԱ. (Փ. ՍՈՎՐԱՅ)

ՎԱՐՔ Ս. ՍԵՂԱ. (Մ. ՍՈՎՐԱՅ)

նախ, յարոյց հաւածան իւր
դէպքով, և զբաղւում էին
հալ, ինքն եղեփանդական թո-
րոտութեամբ ըստ բոլոր ըն-
կառնալ մարմնոյն աղօթածիցա-
վասն յանգիւնութեանն: Զոր
ոչ կարացին ըստել արեւոյա-
կան (տարր. Նամք. օրին. ա-
րեւիտեան) կախարդքն և մա-
րիակեան (տարր. Պարիսոյ
գրչ. Թ. ԿԿ և Նիպսիոյ Ժո-
հիտեան) բժշկէք: յապազս ու-
րոյ յգեան առ Տրդատ՝ առա-
քն նմա գիւթս ի Պարսից և
ի Հնդկաց. սակայն և այնք
ոչ հասին նմա օգուտ: Զոր և
գործքն ունէր էրբայ իրա-
տուէ կրամայեցին, բազմա-
թիւն քաջայոց վախճալ յաւա-
զանն և զնոս Գրչ. իրաւաւ
և ուղեւոր. որոյ լսեալ զլու-
րին մանկանցն հանգիւրծ մար-
ցն կակնամարտ . .

(վեմնով. գրչ. Բաժն իւրաւ) պա-
տեալ և Բաղւաճի եղեն էլայ . .
Յայնմամ եղեփանդական թորոտու-
թիւն գրչ. մարմին թաղաւորին
կոտորեանս (վեմնով. գրչ. կոտորե-
անս) աղաւթիւր. որպէս է իւրա-
նմա առ ի Սատուծոյ լեալ: Վասն
որոյ աղեւթն (վեմնով. գրչ. աղա-
ւթն) և արեւաւորն կախարդք և ա-
րեւաւորեան (վեմնով. գրչ. աղա-
ւթն) և արեւաւորն բժշկէք ոչ կա-
րացին օգնել. աւն անգր և ոչ Պար-
սից և Հայոց: Եւ նա տարակու-
սեալ տրամէր: Ըղծանային գործք
ըստ զնաւ յաւազանս մեհենից
ի Գրչ. Թ. ԿԿ և Նիպսիոյ Ժո-
հիտեան (վեմնով. գրչ. Թ. ԿԿ և Նի-
պսիոյ Ժոհիտեան) կախարդք և մա-
րիակեան (տարր. Պարիսոյ գրչ. Թ.
ԿԿ և Նիպսիոյ Ժոհիտեան) բժշկէք ոչ
կարացին օգնել. աւն անգր և ոչ Պար-
սից և Հայոց: Եւ նա տարակու-
սեալ տրամէր: Ըղծանային գործք
ըստ զնաւ յաւազանս մեհենից
ի Գրչ. Թ. ԿԿ և Նիպսիոյ Ժոհիտեան
(վեմնով. գրչ. Թ. ԿԿ և Նիպսիոյ Ժո-
հիտեան) կախարդք և մարիակեան
(տարր. Պարիսոյ գրչ. Թ. ԿԿ և Նի-
պսիոյ Ժոհիտեան) բժշկէք ոչ կարացին
օգնել. աւն անգր և ոչ Պարսից և Հայոց:
Եւ նա տարակուսեալ տրամէր: Ըղծանային
գործքն ունէր էրբայ իրաւատուէ կրամայեցին,
բազմաթիւն քաջայոց վախճալ յաւազանն
և զնոս Գրչ. իրաւաւ և ուղեւոր. որոյ լսեալ
զլուրին մանկանցն հանգիւրծ մարցն
կակնամարտ . .

սեմնայ Դիոնիսիոսի հետաքրքրութեամբ
կին, զբաղւում էր քրիստոնէից սատակէ:
ինքն ապա եղափանդական թորոտութեան
ընդհանրացումը մարմնով վերադարձու-
մով և նորա յապազումը արեւոյական կախարդք
և Պարսիկեան բժշկէք, և ոչ միայն նոցա,
այլ և որք ի Պարսից անհայր (անհայր) և փորձ
բժշկական դոյլով արեւոտից ոչ կարացին աւա-
նել նմա: Եւ երեւեցան ապա ունեք առ ի
քրմաց տաւարին անհայր. պարտ է աւազան
լինել (լինել) ի տաւարին և ընտել գնա ա-
րեւոտը անհայրական մանկանց, յորում լինի
կարել մարմնութեան չանդակել . . Պատա-
նայ լինի և ծիւղով լուսնայ գնա և այնպէս
լինի արտաւազան հերթական զլինով. և
լինի կակնամարտ ողորդք, որպէս զի զա-
մեհայն զաւառ ողբերգական ձայնիւ լնոր
(լնալ) . . իբր զի ոչ փորձ ան և երկուս աւա-
նել թաղաւորին և Սիւնդիկոսի բարբոս
(Բարբոս) պաշտաման: Հարցանելով ապա
թաղաւորին թէ զինչ այն իցէ . .

Մինչդեռ կը հրատարակուէին պր. կար-
րիէրի քննադատական յօդածներն, սկսան
յիբեւան գալ նա և անոնց դիմադրող հեր-
քումներ, որք կը պաշտպանէին ինչպէս առ

հասարակ գրքին ինքնուրոյնութիւնը, այնպէս
նա և անոր հեղինակ՝ Մովսիսի խորհրա-
ցոյ կենաց ժամանակը: Որոց մասին յառա-
ջիկայս:

Շարայարեւի

յամուարի թուոյն մէջ (1893), խմածք Հ. Մես-
րոյ վարդապետի. իսկ պր. Կարրիէր օգտուած
է վեմնով գրչ. գրչ. որ ապա (1893) լոյս տե-
սալ ի « Բազմապիկայի » և առանձին գիրք ալ ծն-
ւացաւ, աշխատութեամբ Հ. Բարսիլի Սարգիսեանի,

(յէջ 27-29), համընդ տարբերութեամբ՝ մոյմ
վանաց մատենադարանի մէջ գտնուած վեց օրի-
նակներու « Կարուց Ս. Սեղանատրոսի » ըստ փ.
Սոկրատայ: